



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.06.2017թ. ԹԻՎ 13/11-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ **Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյան, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարգսյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 15.06.2017թ. թիվ 13/11-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ **ՀՀ փաստաբանական դպրոց**) կանոնադրությունում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին հարցը,

դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5.-րդ կետի 25-րդ ենթակետի պահանջներով, միաձայն

## Ո Ր Ո Շ Ե Ց՝

**«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրությունում (այսուհետ՝ կանոնադրություն) կատարել և հաստատել ստորև նշված լրացումներն ու փոփոխությունը.**

1) **Կանոնադրության 10.6-րդ կետում «գիտական աստիճան» բառերից հետո լրացնել «և հինգ տարվա իրավաբանի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության ոլորտում առնվազն տասն տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ» բառերը,**

2) **Կանոնադրության 12.2-րդ կետը լրացնել նոր՝ երկրորդ**

13 մայիսի 2020թ.  
թիվ 11/9-Լ

**պարբերությամբ հեղինակականությամբ. «Ուսուցման կարգի առանձնահատկությունները և մանրամասները, այդ թվում՝ հաճախումների գրանցման, քննաշրջանի արդյունքների արձանագրման և հրապարակման, ընթացիկ քննությունների անցկացման և գնահատման, քննության արդյունքների բողոքարկման, միջին որակական գնահատականը որոշելու և փորձաշրջանի կազմակերպման և արդյունքներն ամփոփելու ընթացակարգերը, սահմանում է խորհուրդը:»:**

**3) Կանոնադրության 12.13-րդ կետը շարադրել հեղինակականությամբ. «Արտակարգ դեպքերում՝ արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի (անմիջական սպառնալիքի կամ դրա կանխման) կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքում, ուսուցման երկու փուլերը կարող են իրականացվել հեռավար (դիստանցիոն) կարգով:»:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

13 մայիսի 2020թ.  
թիվ 11/9-Լ  
ք. Երևան